

ԼԻԶԻՆԳԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՈԼՈՐՏՈՒՄ

ՀՏԴ 631.16:656.14.012/479.25

DOI: 10.56246/18294480-2023.15-21

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԵՐԻ

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի
ագրոքիզնեսի կառավարման և քաղաքականության ամբիոնի դասախոս,
տնտեսագիտության թեկնածու,
էլփոստ՝ marry.marrgarryan@gmail.com

ԵԴԻԳԱՐՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի
Ագրարային էկոնոմիկայի ամբիոնի դասախոս,
տնտեսագիտության թեկնածու
էլփոստ՝ yedigaryanl@gmail.com

Հոդվածը նվիրված է Հայաստանի տնտեսության համար կարևոր նշանակություն ունեցող լիզինգի կիրառման հնարավորություններին ու դժվարություններին: Հեղինակը նախ ներկայացնում է ՀՀ-ում լիզինգի ձևավորման և կիրառման պատմությունը ազգային տնտեսության տարբեր ճյուղերում, այնուհետև անցում է կատարում գյուղատնտեսության ոլորտին, թվական տվյալների միջոցով ցույց է տալիս գյուղատնտեսական տեխնիկայի վերաբերյալ առկա, փաստացի վիճակը, այդ տեխնիկայի սարքիչության աստիճանը: Նշում է, թե շուկայական տնտեսվարման պայմաններում ինչպես է ձեռք բերվում գյուղատնտեսական տեխնիկա, ինչ դժվարություններ են հանդիպում, որ երկրներից ինչ քանակության մեքենաներ ու գործիքներ է ներկրվում: Այդ ամենի հիման վրա հեղինակը կատարում է կոնկրետ առաջարկություններ Հայաստանի Հանրապետությունում լիզինգային բիզնեսի զարգացման ուղղությամբ, մատնանշում, թե դա ինչ կտա ոլորտին և ամբողջ հանրապետությանը և, որ ամենակարևորն է, լիզինգային բիզնեսի զարգացումից ինչ կշահեն դրան մասնակցող սուբյեկտները՝ լիզինգի առարկա մատակարարող - վաճառողները, լիզինգատերեր, լիզինգառուներ և պետությունը: Նշում է ՀՀ -ում լիզինգային ծառայությունների թերզարգացման ամենահիմնական պատճառը, այն է՝ օրենսդրական դաշտի անկատարությունը, որն էլ իր հերթին հանգեցնում է պետական աջակցության և այլ բնույթի երաշխիքային ենթակառուցվածքների ոչ լիարժեք կայացմանը, տեղեկատվության բացակայությանը և այլն: Հեղինակը հիմնարար հարց է դարձել լիզինգի մասին հանրապետությունում օրենքի ընդունումը, որով օրենսդրությամբ կսահմանվեն

լիզինգի տեսակները, լիզինգային հարաբերություններում ընդգրկված կողմերի իրավունքներն ու պարտականությունները: Դրա կարգավորումը կհանգեցնի ոլորտի ընդհանուր արդյանավերջության բարձրացմանը:

Բանալի բառեր՝ ձեռնարկափրկություն, լիզինգ, գյուղացիական տնտեսություն, ներդրումներ, հիմնական միջոցներ, առևտրային բանկեր, գյուղատնտեսական տեխնիկա:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Տնտեսական գործընթացների իրականացման գործում ակտիվ մասնակցություն են ցուցաբերում հիմնական կապիտալի շուկայի ինստիտուտները, մասնավորապես վարկային կազմակերպությունները, որոնք, որպես տնտեսական գործունեության ընդլայնման և զարգացման հեռանկար, իրենց ուշադրությունն են սևեռում լիզինգի կիրառման ու ընդլայնման վրա:

Հայաստանի Հանրապետություն լիզինգի զարգացումը կարևորվում է այն պատճառով, որ կապիտալատար տնտեսության ճյուղերում, հատկապես գյուղատնտեսության ոլորտում դրա միջոցառումների իրականացումը դառնում է առավել արդիական ու գրավիչ: Հարկ է նշել, որ այդ գործիքը դեռևս լիովին կայացած չէ և գտնվում է ձևավորման փուլում, հետևաբար շատ է կարևորվում պետության կողմից միջամտության և աջակցության ցուցաբերումը:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Լիզինգի կիրառման և զարգացման ուսումնասիրության հարցում օգտագործվում են տարատեսակ տնտեսական մեթոդներ, որտեղ առավել տարածված են վիճակագրական և ֆունկցիոնալ կախվածության մեթոդները: Վիճակագրական մեթոդի միջոցով հավաքագրում են տվյալ երևույթի հետ առնչվող փաստացի տվյալներ, դրանք, ելնելով առաջադրված խնդրի լուծման պահանջներից, ենթարկվում են խմբավորման և մշակման: Ֆունկցիոնալ կախվածության մեթոդի կիրառման անհրաժեշտությունը բխում է նրանից, որ անհրաժեշտ է բացահայտել և համադրել լիզինգի զարգացման վրա կատարվող ծախսերի ու սպասվելիք արդյունքների ստացման տնտեսական հնարավորությունները և օգուտները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Լիզինգը՝ որպես տնտեսական զարգացման և հիմնական միջոցների վերականգնման կարևոր գործիք, էական նշանակություն ունի Հայաստանի համար, քանի որ ձեռնարկություններն ու ֆիրմաները, իրենց երբեմնի տն-

տեսական ներուժը վերականգնելու և շուկայում տեղ ունենալու համար պետք է իրականացնեն ներդրումներ, ձեռք բերեն նոր տեխնիկա և առաջավոր տեխնոլոգիա, բարձրացնեն արտադրանքի մրցունակության աստիճանը:

Հայաստանի Հանրապետության համար լիզինգը համեմատաբար նոր տնտեսական երևույթ է, որը զարգացած չէր նախկին ԽՍՀՄ-ում, բացառությամբ առանձին սահմանափակ ոլորտների, ընդ որում՝ որոշակի ժամանակահատվածի կտրվածքով: Միայն 20-րդ դարի վերջում օտարերկրյա մի քանի ընկերությունների (Ավտոէքսպորտ, Սովտրանսավտո, Տրակտորէքսպորտ, Աէրոֆլոտ) հետ պայմանագրեր կնքվեցին լիզինգի կիրառման շուրջ: 1989 թվականին ֆրանսիական «Credit Lonnais»-ը խորհրդային բանկի հետ միասին ստեղծեցին լիզինգային ընկերություն, որը զբաղվում էր տրանսպորտային միջոցների լիզինգով¹:

Հայաստանի Հանրապետությունում լիզինգային ընկերությունների ստեղծման առաջին փորձն իրականացվեց 1997 թվականին: Նախատեսվում էր ստեղծել «Հայլիզինգ» բաժնետիրական ընկերությունը, որի նպատակն էր մշակել լիզինգի կանոնադրություն: Սակայն առկա իրավական խնդիրների պատճառով ծրագիրը կյանքի չկոչվեց:

Այնուհետև փորձ կատարվեց կազմավորելու 30 մլն ԱՄՆ դոլար արժեքով կանոնադրական կապիտալ ունեցող առաջին ՓԲԸ-ն՝ «Տրանսլիզինգ» ՓԲԸ, որի հիմնադիրներն էին «Կանաչ» ԲԲԸ, «Հայրեստութիմալեքս» և «Տոսպ» ձեռնարկությունները, «Հայռեկլամը», «Հայլեկտրամեքենա» ԲԲԸ, «Արմմեթել» ՍՊԸ, «Քիմոնեակտիվ» ԲԲԸ և «Սպառողական ընկերությունների միությունը»: Այդ ընկերության գործունեությունն էլ էական արդյունքներ չտվեց, ուստի այն լուծարվեց:

Հայաստանի համար առաջին լուրջ լիզինգային գործարք է համարվում 1998 թ. «Հայկական ավիաուղիներ» ՓԲԸ-ի և ֆրանսիական «Airbus indust» ֆիրմայի միջև կնքած պայմանագիրը, որով Հայաստանը ձեռք բերեց A-310 մականիշի ինքնաթիռ:

Այդ պայմանագրի պայմանները 1991 թվականին փոխարինվել են երկարաժամկետ ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրի:

ՀՀ ֆինանսական շուկան սկսեց հետաքրքրել նաև արտասահմանյան ընկերություններին 1990-ական թվականների վերջում: Ամերիկյան UNIDO

¹ Газман В., Сколько лет российскому лизингу, М., 2004, N 5, http://businesspress.ru/newspaper/article_mld_2_alld_326013.html

կազմակերպության աշխատողները 1999 թվականին, ֆինանսական լիզինգներդնելու արդյունավետությունը պարզելու նպատակով, կատարեցին ֆինանսական շուկայի ուսումնասիրություն, որի նպատակն էր հստակեցնել շուկայի չափերը, բացահայտել շուկայական համակարգի առկա վիճակը, լիզինգի անհրաժեշտությունը տնտեսության տարբեր ճյուղերում և ռիսկերի աստիճանը²:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ-ում առևտրային բանկերից ԱԳԲԱ (ACBA) բանկն է, որը սկսեց իրականացնել լիզինգային գործարքներ և ներկայումս առաջատարն է լիզինգային շուկայում: Նրա լիզինգային գործունեությունը բուռն է: Բանկը 1996-2003 թվականներին տրամադրել է 67 միլիոն ԱՄՆ դոլարի վարկ: Բանկի հիմնական նպատակը գյուղատնտեսության վարկավորումն է: Հայաստանում լիզինգային ներդրումների գործում մեծ է «ԱԳԲԱ Լիզինգ» վարկային կազմակերպության դերը, որն իրականացնում է հիմնական միջոցների վերազինման գործունեություն տնտեսության տարբեր ոլորտներում: «ԱԳԲԱ Լիզինգ» ՓԲԸ վարկային կազմակերպությունը ստեղծվել է 2003թ. մարտի 20-ին (ՀՀ ԿԲ N4 արտոնագիր):

Կազմակերպության կառուցվածքը ներառում է.

1. ACBA-CREDIT AGRICOLE բանկը, որը հիմնական բաժնետերն է՝ ընդհանուր 32% բաժնեմասով:

2. Credit Agricole Leasing ընկերությունը, որը մտնում է «Credit Agricole» ֆրանսիական խմբի մեջ և մասնագիտացված է լիզինգային գործառնությունների իրականացումով:

3. IFC-ն (Միջազգային ֆինանսական կորպորացիա), որը մասնակցություն ունի «ԱԳԲԱ Լիզինգի» կապիտալի մեջ և ապահովում է ընկերությանը վարկային ռեսուրսներով:

4. Լիբանանյան Լիզինգային ընկերությունը:

«ԱԳԲԱ Լիզինգը» սարքավորումներ է ներմուծում աշխարհի ավելի քան 30 երկրներից՝ համագործակցելով շուրջ 100 մատակարար ընկերությունների հետ:

Նրա կողմից լիզինգի տրամադրման պայմաններն են.

² G. Politakis, K. Movsesyan UNIDO investment promotional investurional capacity-bulding branch Market and financial analisıs for finansial leasing in Armenia, January, 2000, p. 17-25

✓ լիզինգի առավելագույն չափը՝ 300 հազ. ԱՄՆ դոլար կամ դրան համարժեք ՀՀ դրամ,

✓ լիզինգի պայամանգրի տևողությունը՝ 6-60 ամիս,

✓ կանխավճար գույքի արժեքի 20-50%-ի չափով՝ կախված գույքի տեսակից:

«ԱԳԲԱ Լիզինգ» ընկերության վարկային պորտֆելն աչքի է ընկնում լիզինգի առարկաների բազմազանությամբ, ընդհանուրի մեջ 36,4%-ը բաժին է հասնում արդյունաբերությանը, 9,8%-ը՝ գյուղատնտեսությանը, 53,8%-ը՝ առևտրի ու սպասարկման ոլորտներին (ընկերությունը ՀՀ ԿԲ կողմից 2003թ. ապրիլի 23-ին ստացավ վարկային կազմակերպության լիցենզիան և սկսեց իր գործունեությունը)³:

Հայաստանում «ԱԳԲԱ Լիզինգը» բացարձակ առաջատարն է շուկայի շուրջ 80% մասնաբաժնով, որը 2014 թվականից ստեղծված «Գրին Լիզինգ» ենթաբրենդի միջոցով իրականացնում է նաև սպառողական լիզինգ: Այն նախատեսված է ֆիզիկական անձանց համար, որոնք ունեն կայուն եկամուտ և ցանկանում են ձեռք բերել հիմնական միջոցներ՝ ավտոմեքենաներ, տրանսպորտային այլ միջոցներ, արևային ջրատաքացուցիչներ, մարտկոցներ և այլն: Եթե բանկերում սպառողական վարկերը տրամադրվում են 22-24%-ով, ապա այստեղ այն սկսվում է 16%-ից: Ծրագրային ֆինանսավորումների ժամանակ (արևային ջրատաքացուցիչներ և մարտկոցներ) տոկոսադրույքները կազմում են 10-12%:

Ագրարային ոլորտում լիզինգային ծառայություններ մատուցելու առաջին լուրջ գործունեությունն իրականացվեց 1999 թվականին, երբ ստեղծվեց «Ագրոլիզինգ» կազմակերպությունը, որը հիմնադրվեց ԱՄՆ գյուղեգարտամենտի աջակցությամբ՝ նպատակ հետապնդելով Հայաստանում զարգացնել գյուղատնտեսական արտադրությունը:

Մինչև 2004 թվականը «Ագրոլիզինգը» գործունեությունն իրականացնում էր ԱՄՆ-ի աջակցության շրջանակներում, ինչի համար էլ նրա եկամուտը չէր հարկվում ԱԱՀ-ով: 2003 թվականին այդ կազմակերպությունը վերակազմավորվեց լիզինգային ընկերության՝ գործելով առևտրային սկզբունքներով: 2003 թվականի օգոստոսի 26-ին «Ագրոլիզինգ» ՍՊԸ-ն վերագրանցվեց ՀՀ կենտրոնական բանկում որպես «Ագրոլիզինգ Լիզինգային վար-

³ «ԱԳԲԱ Լիզինգ» վարկային կազմակերպություն, Ընկերության ստեղծումը և առաքելությունը, <https://acbaleasing.am/hy/about#mission>

կային կազմակերպություն» (ԼՎԿ)՝ ստանալով լիզինգային և վարկային գործունեություն իրականացնելու արտոնագիր: Ագրոլիզինգ ԼՎԿ-ն իրականացնում է ծրագրեր՝ նպաստելով գյուղացիական տնտեսությունների տեխնիկական վերազինմանը և առաջավոր տեխնոլոգիաների ներդրմանը:

2008 թվականին ՀՀ կենտրոնական բանկը գրանցել և արտոնագիր է տրամադրել «ՎՏԲ Լիզինգ» լիզինգային վարկային կազմակերպություն ՓԲԸ-ին: «ՎՏԲ Լիզինգ» նպատակն է Հայաստանի վարձակալական ծառայությունների շուկայում առաջատար դիրքերի գրավումը: Նրա մրցակցային առավելություններն են.

- ✓ երաշխավորված հուսալիություն և կայունություն,
- ✓ բարենպաստ պայմաններով երկարաժամկետ ծրագրերի իրականացման հնարավորություն,
- ✓ վարձակալական ծառայությունների տրամադրման գծով ձեռներեցության թափանցիկություն,
- ✓ աշխատանքային բարձր հեղինակություն և արհեստավարժ կադրերի վերապատրաստում:

Ընկերության ամբողջ բաժնետերը ՎՏԲ բանկ ՓԲԸ-ն է: «Fitch Rating և Standart & Poors» միջազգային կազմակերպություններն ընկերությանը շնորհել են BBB+ վարկային չափանիշներ և բնորոշել որպես «Կայուն»:

Այսպիսով, կարելի է փաստել, որ ՀՀ ֆինանսական շուկայում բանկերի կողմից աստիճանաբար ավելանում է հետաքրքրությունը լիզինգային բիզնեսի հանդեպ, որն արտահայտում է լիզինգային գործարքների նկատմամբ նրանց ընդգծված ուշադրությունը: Այն կարող է նպաստել ձեռնարկությունների արտադրության միջոցների թարմացման և առաջավոր տեխնոլոգիաների առավել լայնամասշտաբ կիրառմանը: Սակայն դա դեռևս բավարար չէ, որպեսզի հանրապետությունում ակնհայտ լինեն հիմնական կապիտալի արդիականացման արդյունքները հատկապես գյուղատնտեսության ոլորտում, որը պահանջում է ավելի մեծ ուշադրություն դարձնել բիզնեսի կազմակերպման այդ առաջավոր ձևի վրա:

Ակնհայտ է, որ առանց ներդրումային նախագծերի իրականացման ոչ մի երկրում հնարավոր չէ ապահովել տնտեսական աճ և զարգացում: Առավել ևս երբ դա վերաբերում է Հայաստանի Հանրապետությանը, որի տնտեսության իրական հատվածում, հատկապես գյուղատնտեսության ոլորտում արտադրական ֆոնդերի մաշվածությունը վաղուց անցել է բոլոր խելամիտ սահմանները: Այս պայմաններում խիստ դժվարանում է գյուղատնտեսական

տեխնիկայի օգտագործումը նրա ցածր արտադրողականության և ծախսատարության հետևանքով:

Բացի դրանից՝ ՀՀ-ի՝ շուկայական հարաբերությունների անցման արդյունքում միայն գյուղատնտեսության ոլորտում ստեղծվել են 340 և ներկայումս էլ գործում են շուրջ 320 հազար գյուղացիական տնտեսություններ, որոնց հողատարածքները բաշխված են շուրջ 1,2 մլն հողակտորների տարբեր մշակաբույսերի ու տնկարկների մշակության տակ:

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության գյուղատնտեսական տեխնիկայի պետական տեսչության կողմից իրականացված վարչական վիճակագրական ռեգիստրի վարման շնորհիվ ստացված գյուղատնտեսական տեխնիկայի վերաբերյալ 2017 թվականի ցուցանիշները բերվում են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1.

ՀՀ գյուղատնտեսական տեխնիկայի 2017թ. առկա քանակը և սարքինության աստիճանը^{4*}:

N	Գյուղտեխնիկայի տեսակներ	Առկա քանակը (միավոր)	Սարքին վիճակում (միավոր)	Սարքինության մակարդակը (%)
1	Տրակտորներ	15239	11960	75.4
2	Բեռնատար ավտոմեքենաներ	15049	11830	76.4
3	Բոլոր մակնիշների հատիկահավաք կոմբայներ	1351	1031	76.3
4	Տրակտորային կցասայլեր	6195	5365	86.6
5	Տրակտորային խոտհնձիչներ	2112	1772	83.9
6	Կերահավաք կոմբայներ	421	308	73.1
7	Սամիչ-բարդօձիչներ	1738	1484	85.3
8	Հատիկագլուխ մեքենաներ	1122	360	85.2
9	Տրակտորային շարքացաններ	1884	1599	84.2
10	Տրակտորային գութաններ	3900	3398	71.3
11	Կուլտիվատորներ	2316	1949	84.1

* (նոր տվյալներ դեռևս հրատարակված չեն)

⁴ Տե՛ս ՀՀ գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագիր: ՀՀ Կառավարության 2017թ. մարտի 16-ի նիստի N=11 արձանագրություն, <https://www.arlis.am/>

Ներկայիս գյուղտեխնիկայի 93%-ը 1976-1991 թվականներին ԽՍՀՄ-ում արտադրված, բարոյապես և ֆիզիկապես մաշված մեքենաներ են: ՀՀ-ն 1997-2020թթ. դրամաշնորհների և այլ միջոցներով Չինաստանից, Ճապոնիայից և Հնդկաստանից ձեռք է բերել 885 միավոր տրակտոր և 116 միավոր հացահատիկահավաք կոմբայն:

2013-2015թթ. ՀՀ գյուղնախարարությունը Բելառուսի Հանրապետությունից ներկրել և ուղղակի վաճառքի կամ լիզինգի պայմանագրի միջոցով գյուղացիական տնտեսություններին է տրամադրել 292 միավոր տրակտոր, 20 միավոր հավաքիչ- մամլիչ, այդքան էլ կուլտիվատոր, 40 միավոր գութան, 34 միավոր կարտոֆիլատնկիչ, 16 միավոր շարքացան: Տրակտորների ուղղակի վաճառքի գինը, կապված նրա մակնիշից, կազմում է 6,7-8,1 մլն դրամ, իսկ լիզինգի միջոցով՝ գործում են հետևյալ պայմանները.

- տարեկան 9-12% տոկոսադրույք,
- 20% կանխավճար,
- տրակտորների համար 6 տարի մարման ժամկետով, իսկ գյուղատնտեսական գործիքների համար՝ 3:

«Հայաստանի ՓՄՁ զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից գյուղատնտեսության տնտեսվարողներին է տրամադրվել 4 հացահատիկահավաք կոմբայն և 8 միավոր տեխնիկա՝ լիզինգի պայմանագրով, միավորի գինը՝ 27.5-30.5 մլն դրամ, 10 տարի մարման ժամկետով:

Վանաձոր քաղաքում 2001 թ.-ին հիմնադրվեց «Չինվան» ՍՊԸ-ն, որը 2003 թվականից իրականացնում է գյուղտեխնիկայի կոմպլեկտավորում՝ Չինաստանից ներկրվող մասերով: Անցած տարիներին ընկերությունն իրացրել է ավելի քան 700 տրակտոր, 3000 կցորդիչ գործիքներ: Բացի դրանից՝ «Չինվան» ՍՊԸ-ն «ԻՔՄԲՕ» ընկերության հետ հավաքել է 20 խոտամամլիչ և մեկ հացահատիկահավաք կոմբայն:

Այդ ամենի հետ միասին դեռևս առկա է գյուղտեխնիկայի նորացման ու սպասարկման հիմնախնդիրը, որի հետ բախվում են տեխնիկան ձեռք բերող և շահագործող սուբյեկտները, սպասարկումների կարիք ունեցող գյուղացիական տնտեսությունները՝ ելնելով ֆինանսական սուղ հնարավորություններից և պահեստամասերի բարձր գներից:

Այս պայմաններում լուծումներից մեկը կարող է հանդիսանալ գյուղացիական տնտեսությունների միավորումը՝ կոոպերատիվների կամ ներդրումային ընկերությունների ստեղծման ճանապարհով:

Գյուղմթերքների արտադրության և վերամշակման ուղղությամբ ներմարգային ընկերություններ կազմավորելու դեպքում տարածաշրջանի կամ մարզի ղեկավարությունը լիզինգային գործարքի համար պետք է դառնա երաշխավոր, ապահովի լիզինգային հարաբերությունների իրավական նորմերը: Այս դեպքում վարձակալական վճարի մարման, տեխնիկայի սպասարկման և մյուս պարտականությունների ամբողջ պատասխանատվությունն իր վրա է վերցնում միավորման ղեկավարությունը, որը, նպատակ ունենալով բավարարել տնտեսությունների պահանջները, կարգավորում է ֆինանսական վարձույթով վերցրած գույքի օգտագործումը: Գյուղատնտեսական տեխնիկայի համատեղ տնօրինման ու օգտագործման պարագայում մեկ հա վարելահողի մշակման համար կապիտալ ներդրումները, համեմատած անհատական օգտագործման հետ, նվազում են 3,4 անգամ, իսկ ծախսերը նվազում են 3,3 անգամ⁵:

Լիզինգով ձեռք բերված գույքի համատեղ օգտագործումը տարբեր տնտեսվարող սուբյեկտների կողմից հնարավորություն կտա իջեցնել թողարկվող գյուղատնտեսական մթերքների ծախսերը, բարձրացնել արտադրության արդյունավետության մակարդակը: Դրա համար անհրաժեշտ է իրականացնել գյուղատնտեսական արտադրության համակենտրոնացում, ոլորտում ուղղահայաց կողմնորոշմամբ հոլդինգային կազմակերպությունների ստեղծում և զարգացում: Այս իմաստով հետաքրքրություն է ներկայացնում Ռուսաստանի Դաշնության փորձի ուսումնասիրությունը⁶: Ռուսաստանում անվճարունակ կազմակերպությունների աշխատանքը բարելավելու նպատակով շատ տարածաշրջաններում ձևավորվեցին մասնագիտական հանձնաժողովներ, որոնք մշակեցին տնտեսությունը ճգնաժամից դուրս բերելու կոնկրետ միջոցառումներ: Այդ հանձնաժողովների մեջ ներգրավված էին գործադիր իշխանությունը, հարկային, ֆինանսական ծառայությունների ներկայացուցիչները: Իրականացվեցին գյուղմթերքների արտադրության, դրանց վերամշակման, պահպանման, տեղափոխման, իրացման և օգտագործման հետ կապված միասնական ծրագրեր:

Գյուղական վայրերում նման կառույցների ստեղծման, միասնական մոդելի ձևավորման և լիզինգային գործարքների միջոցով գյուղատնտեսական

⁵ Шариков Ф. К., Состояние и перспективы развития крестьянских (фермерских) хозяйств // Ф. К. Шакиров, Р. Исламиев // Экономика с/х и перераб. предприятий, 1997, М., с. 23-31

⁶ Джуха В.А., Лизинг, Ростов-н/ Д., Феникс, 1999, 319 с.

տեխնիկայի թարմացման համար շատ կարևոր է նկատի ունենալ կոնկրետ տնտեսությունում ստեղծված արտադրատնտեսական ներուժը և հնարավորությունը:

Վերջին տասնամյակում Ռուսաստանի Դաշնությունում գյուղացիական տնտեսությունների մեքենատրակտորային հավաքակազմի նորացումը հիմնականում իրականացվում է լիզինգի միջոցով, որը ստեղծվել է ֆեդերալ ու մունիցիպալ բյուջետային, ինչպես նաև օրենքով չարգելված ուրիշ աղբյուրների հաշվին: Ռուսաստանում բյուջետային միջոցները գյուղատնտեսության նախարարությանն են հատկացվում վերադարձման պայմանով, որի պարագայում, որպես լիզինգային օպերատոր հանդես է գալիս հատուկ այդ նպատակով ստեղծված բաժնետիրական ընկերությունը: Ընդհանուր առմամբ ՌԴ-ում լիզինգի զարգացման գործընթացին նպաստեց (1998թ.) «Լիզինգի մասին» ֆեդերալ օրենքի⁷ ընդունումը, ինչպես նաև բավարար քանակությամբ մասնագետների առկայությունը, գործադիր մարմինների կողմից մեծ ուշադրության հատկացումը այդ հիմնախնդրի լուծմանը:

Նշված օրենքի նորմերով օրենսդրորեն ամրագրվեց լիզինգի կարգավիճակը՝ որպես ներդրումային գործունեության առանձնահատուկ ձև: Այդ օրենքում նշված է, որ լիզինգի առարկա կարող է ծառայել անշարժ ու շարժական գույքը, ինչը կարող է օգտագործվել ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու ժամանակ:

ՀՀ-ում լիզինգային ծառայությունների թերզարգացման ամենահիմնական պատճառը օրենսդրական դաշտի անկատարությունն է, որն էլ իր հերթին բերում է պետական աջակցության և այլ բնույթի երաշխիքային ենթակառուցվածքների ոչ լիարժեք կայացմանը, տեղեկատվության բացակայությանը և այլն: Հետևաբար օրախնդիր հարց է դարձել հանրապետությունում լիզինգի մասին օրենքի ընդունումը, որով օրենսդրությամբ կսահմանվեն լիզինգի տեսակները, լիզինգային հարաբերություններում ընդգրկված կողմերի իրավունքներն ու պարտականությունները:

Հավելենք նաև, որ ՀՀ գյուղատնտեսության ոլորտում տնտեսվարողների ցածր վճարունակության և նոր գյուղատնտեսական տեխնիկա ձեռք բերելու ցածր վճարունակ պահանջարկի հետևանքով ՀՀ կառավարության կողմից 2022 թվականին իրատեսական չգնահատվեց գյուղատնտեսական

⁷ Федеральный закон Российской Федерации «О лизинге» от 14.10.1998, <http://www.kremlin.ru/acts/bank/13079>

տեխնիկայի հավաքակազմի նորացման համար նախատեսված տարեկան 10,0-12,5%-ի սահմանաչափը: Արդյունքում ՀՀ-ում գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի աջակցության ծրագրի շրջանակներում նախատեսվեց տեխնիկայի նորացումն իրականացնել ավելի փոքր ծավալներով՝ 1,0-3,0%-ի չափով, որը նախադրյալներ կստեղծի հետագա տարիներին գյուղատնտեսության տեխնիկական հավաքակազմի առավել արագ տեմպերով վերազինման համար⁸:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Եթե հաշվի առնենք, որ լիզինգի տրամադրումը շահույթ հետապնդող գործունեություն է, որին մասնակցում են քառակողմ սուբյեկտներ (լիզինգի առարկա մատակարարող-վաճառող, լիզինգատու, լիզինգառու և պետություն), ապա այդ գործարքից շահում են բոլորը.

ա) Լիզինգի առարկայի մատակարար-վաճառողը ունենում է՝

- ✓ լիզինգային ապրանքի վաճառքի ծավալի աճ,
- ✓ վճարունակ պահանջարկի ապահովում,
- ✓ տնտեսական օգուտ:

բ) Լիզինգատուն՝

✓ ի հաշիվ հարկային, մաքսային և վարկային արտոնությունների՝ ստանում է տնտեսական օգուտ,

✓ երաշխավորված է լիզինգային գործարքի ցածր ռիսկայնությունը, քանի որ լիզինգի առարկայի հանդեպ պահպանվում է սեփականության իրավունքը,

✓ ընդլայնում է տնտեսական գործունեության շրջանակը:

գ) Լիզինգառուն՝

✓ գործարքի կնքումը չի պահանջում գրավադրում, բիզնես-պլանի առկայություն,

✓ լիզինգային գույքի արժեքի մեջ ի սկզբանե ներառվում են տեղափոխման, մաքսագերծման և այլ կարգի ծախսերը,

✓ վճարումները կարող են իրականացնել գյուղատնտեսական բերքի ստացման հարմարեցված ժամանակացույցով,

✓ ազատվում է գույքահարկից,

⁸ Լրացուցիչ տե՛ս ՀՀ կառավարության 2022 թվականի հունվարի 27-ի «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական լիզինգի աջակցության ծրագիրը հաստատելու մասին» թիվ 105-Լ որոշումը, <https://www.arlis.am/>:

✓ ունի պայմանագրային ժամկետի ավատին գույքի հանդեպ սեփականության իրավունքի ձեռքբերման հնարավորություն,

✓ ստանալ խորհրդատվություն տեխնիկայի ընտրության, տեղադրման և շահագործման ժամանակ և այլն:

դ) Պետությունը՝

✓ տնտեսության ոլորտներում բարձրացնում է արտադրության նյութատեխնիկական մակարդակը,

✓ բարձրացնում է գյուղատնտեսական ոլորտի աշխատողների աշխատանքի արտադրողականությունը և արտադրանքի որակը,

✓ խթանում է փոքր և միջին բիզնեսի զարգացմանը,

✓ մեծացնում է պետական բյուջեի հարկային մուտքերի չափերը և այլն:

Այդ ամենի հետ միասին ստացված տնտեսական արդյունքները պետք է բաշխվեն գյուղատնտեսական արտադրության լիզինգի մասնակիցների միջև համապատասխան չափաբաժիններով: Փոխադարձ հաշվարկների նման մոտեցումը համապատասխանում է ինչպես գյուղացիական տնտեսությունների, այնպես էլ լիզինգատուների ու պետության շահերին: Ֆյուչերսային հաշվարկները հնարավորություն են տալիս դրամական միջոցների սղության պայմաններում կազմակերպել գյուղատնտեսական արտադրություն, իսկ գույքի վարձակալության դիմաց վճարումներն իրականացնել բերքահավաքից հետո: Ընդհանրապես երկրում գների աճի պայմաններում ֆյուչերսային գործարքներում ագրոլիզինգը ծառայում է որպես ագրոարդյունաբերական համալիր կապիտալի օգտագործման լավագույն մեխանիզմ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Газман В., Сколько лет российскому лизингу, М., 2004, N 5, http://businesspress.ru/newspaper/article_mld_2_alld_326013.html

2. G. Politakis, K.Movsesyan UNIDO investment promotional investurional capacity-building branch Market and financial analisis for finansial leasing in Armenia, January, 2000, p. 17-25.

3. «ԱԳԲԱ Լիզինգ» վարկային կազմակերպություն, Ընկերության ստեղծումը և առաքելությունը, <https://acbaleasing.am/hy/about#mission>:

4. ՀՀ գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագիր: ՀՀ Կառավարության 2017թ. մարտի 16-ի նիստի N=11 արձանագրություն, <https://www.arlis.am/>:

5. Шариков Ф.К., Состояние и перспективы развития крестьянских (фермерских) хозяйств // Ф.К.Шакиров, Р.Исламиев//Экономика с/х и перераб. предприятий, 1997, М., с. 23-31

-
6. Джуха В.А., Лизинг, /Ростов-н/ Д., Феникс, 1999, 319 с.
7. Федеральный закон Российской Федерации «О лизинге» от 14.10.1998, <http://www.kremlin.ru/acts/bank/13079>
8. ՀՀ կառավարության 2022 թվականի հունվարի 27-ի «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական լիզինգի աջակցության ծրագիրը հաստատելու մասին» թիվ 105-Լ որոշումը, <https://www.arlis.am/>

PROBLEMS AND OPPORTUNITIES FOR LEASING APPLICATION IN THE AGRICULTURAL SECTOR OF THE REPUBLIC OF ARMENIA

MARGARYAN MERI

PhD in Economic Sciences

Lecturer at the Chair of Agribusiness Management and Politics,

Armenian National Agrarian University

e-mail: marry.marrgarryan@gmail.com

YEDIGARYAN LUSINE

PhD in Economic Sciences

Lecture at the Chair of Agrarian Economics,

Armenian National Agrarian University

e-mail: yedigaryanl@gmail.com

The article is dedicated to exploring the possibilities and challenges of leasing, which is important for the economy of Armenia. The author begins by presenting the history and application of leasing in various sectors of the Armenian economy. The focus then shifts to the agricultural sector, utilizing numerical data to depict the current state of agricultural machinery and the level of equipment of these machines.

The article outlines how agricultural machinery is acquired in the conditions of market economy and what difficulties are encountered, including the importation of machinery and tools from other countries. Based on these considerations, the author provides some specific recommendations for the development of the leasing business in the Republic of Armenia, highlighting the benefits it could bring to the industry and the country as a whole, most importantly, the author underscores the advantages in the leasing process that participants - sellers, leasing companies, lessees, and the state - can gain from the development of leasing. The author points out a fundamental reason for the underdevelopment of leasing services in Armenia, which lies in the imperfect legislative framework, leading to the incomplete establishment of infrastructure for state support and other guarantees, lack of information, etc.

Therefore, the adoption of the law on leasing in the republic becomes a crucial issue, by which the types of leasing, the rights and responsibilities of the parties involved in leasing relationships will be defined by legislation. The regulation of leasing laws is expected to enhance the overall efficiency of the sector.

Keywords: *Entrepreneurship, leasing, agriculture, investments, fixed assets, commercial banks, agricultural machinery.*

ПРОБЛЕМЫ И ВОЗМОЖНОСТИ ПРИМЕНЕНИЯ ЛИЗИНГА В СЕЛЬСКОХОЗЯЙСТВЕННОМ СЕКТОРЕ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

МАРГАРЯН МЭРИ

*Кандидат экономических наук
Преподаватель кафедры управления и политики НАУА
электронная почта: matty.marrgarryan@gmail.com*

ЕДИГАРЯН ЛУСИНЕ

*Кандидат экономических наук
Преподаватель кафедры аграрной
экономики НАУА
электронная почта: yedigaryanl@gmail.com*

Статья посвящена возможностям и трудностям использования лизинга, имеющего важное значение для экономики Армении. Автор сначала представляет историю становления и применения лизинга в различных отраслях народного хозяйства РА, затем переходит к области сельского хозяйства, используя числовые данные для представления современного состояния сельскохозяйственной техники, а также уровня оснащенности этих машин.

Указано, как приобретает сельскохозяйственная техника в условиях рыночной экономики и с какими трудностями приходится сталкиваться, сколько машин и инструментов ввозится из других стран. На основании всего этого автор дает конкретные рекомендации по развитию лизингового бизнеса в Республике Армения, указывает, что он принесет отрасли и всей республике в целом, а главное, от развития лизингового дела какую пользу получают участвующие в нем субъекты: продавцы, поставляющие предмет лизинга, лизинговая компания, лизингополучатель и государство. Он указывает на самую основную причину неразвитости лизинговых услуг в РА, заключающуюся в несовершенстве законодательной базы, что, в свою очередь, приводит к неполному созданию инфраструктур государственной поддержки и других гарантий, недостатку информации и т.д.

Поэтому принятие закона о лизинге в республике стало принципиальным вопросом, посредством которого виды лизинга, права и обязанности сторон, участвующих в лизинговых отношениях, будут определены законодательством, регулирование которого приведет к повышению общей эффективности отрасли.

Ключевые слова: *Предпринимательство, лизинг, сельское хозяйство, инвестиции, основные средства, коммерческие банки, сельскохозяйственная техника.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 12.04.2023թ.:

Հոդվածը գրախոսվել է 23.04.2023թ.:

Ընդունվել է տպագրության 17.11.2023թ.: